

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

1. Սիրու երգիչ Ն. Քուչակի երգերը. մշակեց Գեորգի ԱՍՏՆՈՒՐ. էջ 133. Քիֆ-
լիկ 1905

Մօտ չորս դար անյայտութեան մէջ մնացող բանաստեղծ Մահապետ Քուչակը վերջին ժամանակներս իրաւամբ զբաղեցնում է հայ բանասէրներին. յայտնի են Կ. Կոստանեանի (միջնադարեան հայոց տաղերի ժողովածու-ի մէջ) և Արշ. Չօպանեանի (Վեհապետ Քուչակի դիւանը) ուսումնասիրութիւններն ու Քուչակի բանաստեղծութիւնների հրատարակութիւնները: Այս ուսումնասիրութիւններն այնքան հետաքրքրական և Քուչակի բանաստեղծութիւններն այնչափ գրաւիչ էին, որ հայ բանասիրութիւնը գրկաբաց ընդունեց և մեր միջնադարեան գանձերի ընտրելագոյն մնացորդների շարքը դասեց: Հայ միջնադարեան բանաստեղծների մէջ Նահապետ Քուչակը մի զարմանալի բացառութիւն է կազմում իւր երգի նիւթով. մինչ համարեան մեր բոլոր երգիչները ողբ ու հառաչ են արձակել՝ շրջապատող իրականութեան ազդեցութեան տակ, վարպետ Քուչակը շարունակ սէր է երգել ու սիրով ոգևորուել: Այս գուտ քնարերգու հանճարը, աստուածային կրակի բոցով ներշնչուած, իդէալացնում է զգայական սէրը Հայնէի ոգևորութեամբ և գեղարուեստական հաճոյք պատճառում բանիմաց ընթերցողին:

Տարաբաղդաբար այս հայ տաղանդաւոր բանաստեղծի անձնաւորութեան մասին շատ քիչ կամ կարելի է ասել բոլորովին ոչինչ բան չէ տուել ցայժմ մեր բանասիրութիւնը. միայն այնքանն է յայտնուել, որ Նահապետ Քուչակն ապրում էր տասնևվեցերորդ դարու սկզբում և ծնուել է Վասպուրականի Տոսպ գաւառի, Արշակայ լճի արևելեան ափի վրայ գտնուող Խառակոնիս հայաբնակ գիւղում: Բանաստեղծի գերեզմանը ժողովրդական ուխտատեղի է դարձել, որի մասին Նորին Սրբութիւն Խրիմեան Հայրիկը հետևեալ հետաքրքրական տեղեկութիւնն է

ԵՆՏԹ. Քուչակի մասին ամենից առաջ տպուեց Վուսայ-ում Յ. Թագեանի մի ընդարձակ յօդուած: ԽՄԲ.

հաղորդել գրքոյկիս հրատարակչին: «Վանէն վեց ժամ հետի՛ դէպի արևելք՝ գիւղ մը կայ, Խարակոնիս կըսեն. գիւղին մէջն ալ եկեղեցի մը՝ սուրբ Թէոդորոս: Եկեղեցուն հիմէն բիչ մը հետի կը գտնուի Քուչակին գերեզման, ուր գիւղացիներ ուխտ կերթան: Մանուկ ժամանակ մենք շատ կերթայինք այդ գիւղ: Այժմ չեմ յիշեր գերեզմանին արտաքին ձևը: Գիւղացի ծերունիներ կը պատմեն, թէ զուարճարան մարդ մը եղած է Քուչակ: Մօտակայ գիւղերէն կըկանչեն եղեր զինքը հարսանիք: Քուչակ ալ կաննէ եղեր իր քէման ու կերթայ: Անգամ մըն ալ՝ գիւղի մը չըհասած՝ գայլեր զինքն կըպաշարեն, Քուչակ արագութեամբ կեննէ ծառին գլուխ և կընուագէ: Գիւղացիներ կանեն քէմանին ձայն և կըհասկնան, որ Քուչակ եկեր է: Կեննեն, կըփնտորեն և կըգտնեն զինքն, որ ելած ծառին մը գլուխ անուշ կընուագէ, իսկ գայլեր՝ ծառին բոլորտիք շարուած՝ լուռ մըտիկ կընեն: Կը պատմեն նաև, թէ անգամ մը Քուչակ կը կանչէ գիւղացիներ. ապա կեննէ ս. Թէոդորոսին կատար և կըկանչէ. «այստեղէն ինքզինքս վար պիտի նետեմ. ուր որ իյնամ, այնտեղ թաղեցէք զիս»: Գիւղացիներ մտիկ չեն ընէր. կը կարծեն թէ Քուչակ զուարճարանութիւն կընէ: Սակայն նա ինքզինքը վար կընետէ և կը մեռնի: Եւ Քուչակին գերեզման այդ օրէն ուխտատեղի մը եղած է գիւղացիներէ (էջ 6—7):

Գայլերի պատմութեան աւանդութիւնը կարող է ապացոյց լինել, որ նահապետ Քուչակը հանճարեղ բանաստեղծ լինելու հետ ի միասին պէտք է և շատ հմուտ և ոգևորուող երաժշտ լինէր. միմիայն, ինչպէս ասում են՝ քարին շունչ տուող երաժշտութիւնը կարող է գաղանին մեղմացնել: Անհաւանական չէ նոյնպէս, որ բորբոքուած սիրոյ երգիչը այդպիսի ողբերգական վերջ ունեցած լինի. սէրն արեւածախնդիր է:

Գէորգ Ասատուրը (կէդծ անուն է) ընտրել է Քուչակի բանաստեղծութիւններից լաւագոյնները և «մշակել» մի փոքր տարօրինակ գաղափար է ուրիշի բանաստեղծութիւնները մշակել «աշխատելով մօտեցնել մեր ժամանակի ճաշակին, ոգուն» (էջ 9). սակայն երևի պ. Ասատուրը «մշակել» խօսքով ուզում է արտայայտել, որ ինքը այդ բանաստեղծութիւնները մեր գըրական ոճի է վերածել և տաղաչափութեան այժմ ընդունուած ձևերով զարդարել: Տարաբաղտարար բնագրերը չունենալով (պ. Ասատուրի առաջ բերած մի քանի տողերից դժուար է ճիշտ գաղափար կազմել), չենք կարող ասել՝ թէ որ չափով «մշակողը» կարողացել է հաւատարիմ մնալ իսկականին, բայց և այնպէս այդպիսի փոփոխութիւնը պէտք է որ Քուչակի

երգերի համն ու հոտը փախցրած լինի:

Այս հրատարակութիւնը բանասիրական արժէք չի կարող ունենալ, բայց «մշակողի» նպատակն էլ այդ չէ եղել. նա կամեցել է «դուրս կորզել զխոնականների կարիներներէց և նուիրել հայ հասարակութեան գրական մի այնպիսի մարգարիտ, որ ամեն մի ժողովրդի պարծանք կարող է համարուել» (էջ 8—9): Այս տեսակէտից անյաջող չենք համարոււմ պ. Ասատուրի աշխատութիւնը:

Ընթերցողին որոշ դաղափար տալու համար՝ առաջ բերենք մի քանի հատուածներ.

«Եթէ հրամայիմ անյատակ ծովին
 Եւ ծովը ամբողջ դառնայ սև թանաք,
 Թէ յանկարծ գլորչի փոխուի լիովին
 «Բոլոր շամբերի եղէգն անքանակ,
 Օ՛, չեն բաւական սիրտըս պատառող
 Սէրն ու վրշտերը արտայայտելու...» (էջ 13)

«Երնէ՛կ ես փոքրիկ ծիծեռնակ լինեմ,
 Ձարդախիդ գլխին բունըս կը շինեմ.

Երբ ծագի արև՝

Կը թռչեմ վերև

Սէրըս երգելու.

Դեռ չը մթնացած՝

Կը թռչեմ ես ցած

Մոցդ պարկեղու...» (էջ 18)

«Ես աչք, դու լուս, այ հոգի,

Ձէ՛ որ անլուս աչքն է կուր.

Ես ձուկ, դու ջուր, ջան հոգի,

Ա՛խ, ֆնց ապրի ձուկն անջուր:

Ձրկան ջուրը թէ փոխես,

Կապրի նորում նա ազատ,

Բայց բաժանեն ինձ ու քեզ,

Ճար չը կայ ինձ մահից դատ»: (էջ 26)

«Եւր, քո սէրը արիւն դառած.

Երակներիս մէջ լուծուեց.

Ձքնաղ անձրդ միատարած

Տանջուած հոգուս մէջ ծրծուեց:

Կուզեմ սրտիս դանակ զարկեմ,

Ասեմ «արիւն, դուրս արի՛».—

Մարդ ֆնց քաշէ ձեռն իրա դէմ,

Ասէ՛ «հոգի, դուրս արի՛»: (էջ 29)

Ներկարիւր, գիշեր, մեծ տարի դարձիւր,
Դաժան, սև խաւար, իջիւր, թանձրացիւր,
Իմ մուրազն առայ այսօր իրիկուն—

Վերջապէս եկաւ հիւր եարս թագուն,

Եօթ սարի յետև կանգնիւր, արշալոյս,

Թէ չէ կը փախցնէ սիրածիս քո լոյս,

Թող յաւէտ այսպէս խաւարում մընամ,

Միայն եարըս միշտ կըծքիս ունենամ: (էջ 43)

Անս այս ոգևով են ներշնչուած Բուշակի բոլոր բանաստեղծութիւնները, որ զուտ քնարերգական պարզ հնչիւն ունին, զգացմունքներ են արտայայտում և հեռու են որևէ տհնդհնցիայից. իսկական սիրոյ քրքիչ է Բուշակը:

2. Ղազ. քահ. Յովսէփեան. ակնարկներ Ուտիացի և մահմեդական հայերի մասին Թիֆլիզ. 1904 էջ 102

Ուտիացիք մի հին, պատմական, ազգի մնացորդներն են, որ նախնի դարերում ընդունելով հայոց դաւանած կրօնը՝ հետզհետէ ձուլուել են հայերի հետ՝ պահպանելով մասամբ իրենց մայրենի լեզուն: Մեր պատմագիրների վկայութեամբ սբ. Մեսրոպը Աղուանից ազգի համար ևս այրուբեն է գտնում. այս Աղուանից ազգի սերունդներն են համարուում ուտիացիք, բայց տարաբաղաբար սրանց գրականութիւնից ոչ մի հետք չէ մընացել և այսպիսով հնար չկայ իրական փաստերով ապացուցանելու այժմ մեր մատենագիրների վկայութիւնը: Այս հետաքրքրական պատմական ժողովրդի մասին ցայժմ ոչ մի լուրջ հետազօտութիւն չէ հրատարակուել. Մակար Բարխուդարեան սրբազանի աշխատութիւնը պատմական և տեղագրական ուսումնասիրութիւն է («Աղուանից երկիր և դրացիք») իսկ Սարգիս արքեպ. Ջալալեանի տուածը՝ կցկտուր տեղեկութիւններ («Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան» տեղագրական նկարագրութիւնների շարքում):

Լազարեան ճեմարանի ուսուցիչ Ստ. Տէր-Սարգսեանի մի շարք յօդուածները («Մեղու Հայաստանի» լրագրում ուտիացիների մասին անաւարտ մնալով՝ նոյնպէս մի ամփոփ գաղափար չեն կազմում այդ ազգի անցեալի և ներկայի մասին:

Գրքոյկիս հեղինակը Ուտիացի լինելով՝ բարի ցանկութիւն է ունեցել այդ թերին լրացնելու և իւր հայրենակիցների ներկայ գրութիւնը նկարագրելու. սակայն տարաբաղաբար նրա ցանկութիւնը մնացել է լոկ ցանկութիւն, իսկ տուածը